

this paper no harm will be done so long as it is not smaller and is uniform [in quality]. Written at the entrance of the All Savior's Convent [in Julfa] in the year 1139 [+551=1690] on the 24<sup>th</sup> day of the month of April.

On the reverse:

Let it be known [malum] to you, Agha, from Minas that you carry out without delay what is written here and take the money from the latter [?] and send [the goods] [Seal of Khwaja Minas.




Figure 2 Map of Hovannes Jughayets'i's peregrinations, 1639-1646.

### ՅՈՆԻԱՆ ԱՔԵՄԵՆԵԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Յովհաննես Խորիկեան

Չնայած փոքր տարածքին՝ 1 սատրապուլթեան վարչական ենթաշրջան հանդիսացող Յոնիան ե՛լ քաղաքական, ե՛լ տնտեսական առումով ունէր բացառիկ կարեւոր նշանակութիւն, քանի որ Բալկանեան յոյներէ հետ լարուած ռազմաքաղաքական յարաբերութիւնները միշտ էլ վտանգում էին պարսկական գերիշխանութեան ամրութիւնը Փոքր Ասիայի արեւմտեան ընդարձակածաւալ տարածքներում:

Այդ իսկ պատճառով յոյն հեղինակները ծաւալուն տեղեկութիւններ են հաղորդում Աքեմենեան դարաշրջանի Յոնիայի եւ, առանձին վերջրած, վերջինիս տարբեր քաղաքների մասին: Հարկաւ, հին հեղինակների շարքում իր առանձնայատուկ տեղն ունի պատմահայր Հերոդոտոսը, որի տեղեկութիւններն էլ կը քննենք առաջին հերթին: Յոյն պատմիչը գրում է. «Յոնիացիներից, Ասիայի մագնեսեաններից, էոլեաններից, կարիացիներից, լիւկիացիներից եւ միլիւացիներից եւ պամփիլիացիներից, քանի որ նրանց բոլորի համար սահմանուել էր մէկ ընդհանուր հարկ, ստացուում էր չորս հարիւր տաղանդ արծաթ: Այս էլ Դարեհը հաստատեց որպէս

առաջին նահանգ»<sup>2</sup>: 1 սատրապուլթեան մէջ թուարկուած ժողովուրդներն աշխարհաբարական առումով բնակուել են Փոքր Ասիայի արեւմտեան եւ հարաւային շրջանների մեծ մասում, ընդ որում՝ յոնիացիները գտնուել են Փոքր Ասիայի արեւմտեան ծովամերձ հատուածի գրեթէ կենտրոնական մասում՝ լիւկիացիներից արեւմուտք, էոլիսից հարաւ<sup>3</sup>:

Լիւկիական թագաւորութեան ժամանակաշրջանում յոնիացիները նուաճում են կրեսոսի կողմից<sup>4</sup>: Համաձայն Հերոդոտոսի՝ յոնիացիները երկրորդ անգամ նուաճում են պարսիկ կիւրոսի կողմից<sup>5</sup>: Պատմիչի տեղեկութիւններից նաեւ պարզուում է, որ յոնիացիները պարսկական բանակի, յատկապէս՝ նաւատորմի կազմում

2 Հերոդոտոս, Պատմութիւն ինը գրքից, թարգմանութիւնը Ս. Կրկեաշարեանի (այսուհետեւ՝ Հերոդոտոս), Երեւան, 1986, III, 90:

3 Նոյն տեղում, V, 49, 123: Հմմտ. Страбон, География в 17 книгах, перевод, Ленинград, 1964, с. 129; Pliny, Natural History, vol. II, with an English translation by H. Rackham, Cambridge-Massachusetts-London, 1947, Loeb Classical Library, XXIX, 103, p. 298; XXXI, 112, 304. Յոնիացիները յիշատակում են նաեւ առանձին-առանձին էոլիացիների եւ ճելլեսպոնոսիցիների հետ (տե՛ս Xenophon, Scripta Minora, Agesilaus, I, 14, p. 66; II, 11, p. 84):

4 Հերոդոտոս, I, 6; 28: Հերոդոտոսի մի տեղեկութիւնից երեւում է, որ պարսիկների համար Յոնիա եր նաեւ Բալկանեան Յունաստանը (VII, 51): Յոնիական քաղաքների նուանումը սկսուել էր Գիւգէսի ժամանակներից (տե՛ս Ի. Ս. Տենուսի, Ионийские города в составе Лидийско-ионийского царства, Проблемы античной истории и культуры, I, Ереван, 1979, с. 254):

5 Հերոդոտոս, I, 169-171: Հմմտ. Քսենոփոն, Կիրոսական, թարգմ. Ս. Կրկեաշարեանի (այսուհետեւ՝ Կիրոսական), Երեւան, 2000, էջ 5:

1 Плутарх, Алкивиад, XXIV, - "Избранные жизне-описания", т. I, Москва, 1987, с. 372; Xenophon, Scripta Minora, with an English translation by E. C. Marchant, Cambridge, Massachusetts, London, 1946, Loeb Classical Library, Agesilaus, I, 14, p. 66; Ксенофонт, Греческая история, пер. С. Лурье, Москва, 2010, с. 252-253 и след. վերջին գրքում յոնիական քաղաքները եւ կղզիները բազմիցս յիշատակում են ռազմաքաղաքական դէպքերի կատարողները, սակայն մենք կ'անդրադարձանք միայն այն տեղեկութիւններին, որոնք ունեն պատմաաշխարհագրական նշանակութիւն:

ունեցել են կարեւոր դերակատարութիւնը<sup>6</sup>: Հերոդոտոսի տեղեկութիւններէն երեւում է, որ Յոնիայի մէջ մտել են նաեւ Քիոս, Սամոս, Լեսբոս կղզիները<sup>7</sup>, Փոկայա, Միլետ, Տէոս, Կլագոմենէ, Պրիենա, Միոս, Էրիթրէա քաղաքները<sup>8</sup>:

Միլետը եւ Հարեւան հողերը մինչեւ Միկալէ «Իլիականում» համարուում են կարիացիների բնակութեան տարածքներ<sup>9</sup>: Հեկատէոս Միլեթացին Միլետը համարում է կա՛մ Յոնիայի, կա՛մ Կարիայի քաղաքը<sup>10</sup>, այսինքն՝ Միլետը նախապէս եղել է կարիացիների հողը, ապա համարուել յոնիական: Հերոդոտոսը Միլետը՝ խեթական դարաշրջանի Միլաւատա-Միլաւանդան<sup>11</sup>, համարում է Յոնիայի զարդը՝ Լադա փոքր կղզու դիմաց<sup>12</sup>: Միլետի ապստամբութիւնը ճնշելուց յետոյ միլետացիների մեծ մասը վերաբնակեցուեց Կարմիր ծովի մօտ՝ Ամպէ քաղաքում: Միլետ քաղաքն իր շրջակայքով եւ դաշտավայրը պարսիկները պահեցին իրենց, իսկ լեռնային մասերը յանձնեցին Պեղասայի կարիացիներին՝ Հալիկաոնասոսից հիւսիս-արեւելք<sup>13</sup>: Յետագայում Միլետի փոխարէն Յոնիայում կարեւոր նշանակութիւն ունէր Եփեսոսը, որի յիշատակութիւնը փոքրասիական

երկրների շարքում հաւասարազօր էր ամբողջ Յոնիային<sup>14</sup>:

Յոնիայի Միկալէ թերակղզում գտնուող Պանիոնիոն բնակավայրում (ներկայիս Գեաուր-Չանղլին<sup>15</sup>), գումարում էր Յոնիայի քաղաքներից ժամանած ներկայացուցիչների համայնիական ժողովը<sup>16</sup>, եւ տեղի էին ունենում Պոսէյդոնին նուիրուած զոհաբերութիւններ<sup>17</sup>:

Աւելի ուշ համայնիական այս սրբավայրը տեղափոխուում է Եփեսոս<sup>18</sup>, որը Սպարտայի համար դառնում է կարեւոր յենակէտ Արեւելքում<sup>19</sup>:

Կիւրոս Կրտսերը նոյնիսկ սպարտացի զօրավար Լիսանդրոսին յանձնում է յոնիական քաղաքների կառավարումը եւ հարկերի հաւաքումը<sup>20</sup>:

Քսերքսէսի հելլենական արշաւանքին յոնիացիները, որոնք իրենց անունը ստացել էին Քսութոսի որդի Իոնից<sup>21</sup>, տրամադրել էին հարիւր նաւ եւ զինուած էին ինչպէս հելլէններ: Հերոդոտոսը նաեւ գրում է, որ արշաւանքին «կղզեբնակները տրամադրել էին տասնեօթ նաւ եւ զինուած էին ինչպէս հելլէններ: Սրանք եւս պելասգեան ազգ էին, իսկ յետագայում կոչուեցին յոնիացիներ նոյն պատճառով, ինչ եւ յոնիական տասներկու քաղաքները բնակեցրածները, որոնք եկել էին Աթէնքից:

14 Polibii *Historiae*, vol. IV, Libri XX-XXXIX, edidit Th. Buettnner-Wobst, Stuttgart, 1985, X, 49, p. 87.  
15 Скилак Карниандский, *Перипл обитаемого моря*, с. 268.  
16 Հերոդոտոս, I, 141, 142, 143, 148. VI, 7. IX, 90:  
17 Страбон, с. 598.  
18 Diodori *Bibliotheca Historica*, ed. L. Dindorfius, vol. II, Lipsiae, 1826, XV, 49, p. 458-459. Տե՛ս նաեւ М. Лаптева, *У истоков древнегреческой цивилизации: Иония XI-VI вв. до н. э.*, Санкт-Петербург, 2009, с. 111.  
19 Э. В. Рунг, *Греция и Ахеменидская держава: История дипломатических отношений в VI-IV вв. до н. э.*, Санкт-Петербург, 2008, с. 269.  
20 Diodori *Bibliotheca Historica*, ed. L. Dindorfius, vol. II, Lipsiae, 1826, XIII, 104, p. 278.  
21 Հերոդոտոս, VIII, 44:

6 Նոյն տեղում, IV, 89:  
7 Նոյն տեղում, VI, 8: Հերոդոտոսի տեղեկութիւնից պարզուում է, որ Լեսբոսում բնակուել են Էոլիացիները, թէեւ սրանց եւս ընդհանուր անուանում է յոնիացիներ: Սկիլաքս Կարիանդացին Լեսբոսը համարում է Էոլական կղզի (տե՛ս Скилак Карниандский, *Перипл обитаемого моря*, «Вестник древней истории», 1988, № 2, с. 261): Հմմտ. Плутарх, *Алкивиад*, XXXV, с. 384.  
8 Հերոդոտոս, I, 170. IV, 138. V, 123. VI, 8:  
9 Հոմերոս, *Իլիական*, թիմ յունարէն բնագրից թարգմ. Հ. Համբարձումեան, Երեւան, 1955, II, 370:  
10 С. Müller, *Fragmenta historicorum graecorum*, v. I, Parisiis, 1841, fr. 225, p. 15.  
11 Т. Bryce, *The Routledge Handbook of the Peoples and Places of Ancient Western Asia*, London, New York, 2009, p. 472.  
12 Հերոդոտոս, V, 28. VI, 7:  
13 Նոյն տեղում, I, 175; VI, 20:

...Յոնիական եւ կարիական նաւատորմի հրամանատարն էր Արիարիզնէսը, Դարեհի որդին Գորբիւսաի դստրից»<sup>22</sup>:

Մինչեւ Դարեհ Ա-ի վարչական վերափոխումները Փոիւզիան, Լիւզիան եւ Յոնիան՝ որպէս մէկ սատրապութիւն, ենթարկուում էին Օրոյտէսին<sup>23</sup>: Քսենոփոնը եւս գրում է, որ Կիւրոս Մեծը Լիւզիայի եւ Յոնիայի սատրապ է նշանակում Քրիւսաստասին<sup>24</sup>, ընդ որում՝ յոնիական քաղաքները, որոնց մէջ իրենց նշանակութեամբ առանձնանում էին Միլետը եւ Եփեսոսը<sup>25</sup>, Ք. ա. Ե. դարի վերջին վարչական առումով ենթարկուում էին նախ Լիւզիայի եւ Կարիայի սատրապ Տիսասիեոնէսին, ապա Կիւրոս Կրտսերին<sup>26</sup>: Կիւրոս Կրտսերը Թամոսին նշանակում է Յոնիայի, Էոլիսի եւ մերձակայ երկրների կառավարիչ<sup>27</sup>: Վարչական առումով տարածքը նոյնանում է I սատրապութեան տարածքին: Թամոսին՝ որպէս Յոնիայի հիւպարքոս, յիշատակում է Թուկիդիդէսը<sup>28</sup>: «Անաբասիսի» վերջում Լիւզիան յիշատակ-

ւում է առանձին սատրապով<sup>29</sup>: Ք. ա. մօտ 392 թ. Լիւզիան, Յոնիան կառավարում են առանձին սատրապներ, իսկ Կարիան՝ բնիկ տիրակալը, սակայն արդէն 388 թ. Յոնիան եւ Լիւզիան կրկին մէկ սատրապի ենթակայութեան տակ էին<sup>30</sup>: Ք. ա. Դ. դարի 60-ական թուականներին Յոնիան Լիւզիայի եւ Պափլագոնիայի հետ ենթարկուում էր մէկ սատրապի<sup>31</sup>: Մասնագիտական գրամանութեան մէջ, յենուելով Դիոդորոսի կանոնութեան վրայ, կարծիք է յայտտեղեկութիւնների վրայ, կարծիք է յայտնուել, որ Միլետի սատրապ Օրոնտէսը պէտք է համարուի Յոնիայի սատրապ<sup>32</sup>, ինչը հազիւ թէ աշխարհագրական առումով պատմիչի կողմից շփոթութիւն լինէր: Միլետի Օրոնտէսի ակտիւ գործողութիւնների հետեւանքով պարզապէս կարող էր արեւմուտքում ժամանակաւորապէս դուրս գալ ծովափնեայ շրջաններ մինչեւ Կայկոս գետի ստորին հոսանքի շրջանը եւ Կիւմէ<sup>33</sup>: Ալեքսանդր Մակեդոնացու արշաւանքների ժամանակ Յոնիան եւ Լիւզիան յիշատակուում են կա՛մ առանձին-առանձին, կա՛մ էլ որպէս մէկ սատրապութիւն<sup>34</sup>: Յոնիայի յիշատակուելը նշանակում է, որ Յոնիան հին հեղինակների կողմից համարուել է ոչ թէ առանձին սատրամից համարուել է ոչ թէ առանձին սատրապութիւն, այլ Լիւզիական սատրապութեան ենթաշրջաններից մէկը, հետեւաբար՝ Դա-

22 Նոյն տեղում, VII, 95; 97:  
23 Նոյն տեղում, III, 127:  
24 Կիրոպեդիա, էջ 355:  
25 Քսենոփոն, *Անաբասիս*, թարգմ. Ս. Կրկեաշարեանի, Երեւան, 1970, էջ 8: Плутарх, *Луциандр*, III, - «Избранные жизнеописания», т. II, Москва, 1987, с. 9; Агесилай, VII, IX, с. 243, 245.  
26 Քսենոփոն, *Անաբասիս*, էջ 9, 10, 17, 32, 41, 116, 139, 140. Ксенофонт, *Греческая история*, с. 259, 304. Դիոդորոս Միկիլիացի, *Պատմական գրադարան*, թարգմ. բնագրից, առաջաբան եւ ծանոթագրութիւններ Ս. Կրկեաշարեանի, Երեւան, 1985, էջ 66. Плутарх, *Луциандр*, IV, с. 9:  
27 Դիոդորոս Միկիլիացի, էջ 57. Diodori *Bibliotheca Historica*, ed. L. Dindorfius, vol. II, XIV, 19, p. 314. Դիոդորոսը Թամոսին մի տեղեկութեան մէջ յիշատակում է Յոնիայի սատրապ (նոյն տեղում, XIV, 35, էջ 332), որը չի ենթարկուում առանձին երկրների սատրապ Տիսասիեոնէսին: Thucydides, *History of the Peloponnesian war*, with an English translation by Ch. F. Smith, vol. IV, London, Cambridge, Massachusetts, 1958, Loeb Classical Library, VIII, XXXI, 2, p. 242.

29 Քսենոփոն, *Անաբասիս*, էջ 197:  
30 М. А. Дандамаев, *Политическая история Ахеменидской державы*, Москва, 1985, с. 238; А. Т. Olmstead, *History of the Persian Empire*, Third Impression, Chicago, 1960, p. 390.  
31 Cornelius Nepos, *History of the Persian Empire*, Third Impression, London, Cambridge, Massachusetts, 1960 (Loeb Classical Library), Datames, XIV, II, 2, p. 512.  
32 М. Weiskopf, *The so-called "great Sairap's revolt": 366-360 B.C.*, "Historia", Heft 63, Stuttgart, 1989, p. 71, 74.  
33 Նոյն տեղում, էջ 89-90:  
34 Արիանոս, *Ալեքսանդրի արշաւանքը*, «Ալեքսանդր Մակեդոնացի» (պատմատե՛սի Արիանոս), Երեւան, 1987, էջ 28, 33. Diodori *Bibliotheca Historica*, ed. L. Dindorfius, vol. III, Lipsiae, 1826, XVI, 47, p. 51.

րեհ Ա-ի վարչական վերածնունդներից յետոյ I սատրապուլթեան նախկին ենթատարածքը, աւելի շուտ ռազմաքաղաքական նկատառումներից ելնելով, միացուել էր լիւզիական սատրապուլթեանը: Օրինակ, հետաքրքիր է Արիանոսի այն տեղեկութիւնը, որ Յոնիայի եւ Լիւզիայի կամ էլ հէնց Լիւզիայի սատրապ Սպիթրիդատէսին Ալեքսանդրը նշանակում է ենթակայ մարզերի կառավարիչ<sup>35</sup>, այսինքն՝ պէտք է նկատի ունենալ Լիւզիայի մէջ ներառուած Յոնիան, որի կառավարիչը նշանակութեամբ շատ կարեւոր էր ու բարձր<sup>36</sup>: Մասնազիտական գրականութեան մէջ կարծիքներ են յայտնուել նաեւ, որ յոնիական քաղաքները Աքեմենեան Պարսկաստանի սատրապուլթիւնների մէջ չեն մտել եւ ենթարկուել են, օրինակ, Կիւրոս Կրտսերին ու Տիսսափեռնէսին ոչ թէ որպէս սատրապներ, այլ՝ մասնաւոր անձանց եւ եղել են ինքնավար, չնայած պարսից թագաւորը այդ քաղաքներից եկամուտ էր ստանում<sup>37</sup>: Փիւնիկիայի եւ Յոնիայի որոշ քաղաքներ նոյնիսկ հատում էին իրենց սեփական գրամները<sup>38</sup>: Սակայն նման մօտեցման դէպքում անտեսուում են Հերոդոտոսի տեղեկութիւնները սատրապուլթիւնների մասին:

Հերոդոտոսը Եփեսոսը, Փոկայան, Սմիւռնէն տեղադրում է Յոնիայում<sup>39</sup>: Պատմիչը յայտնում է, որ յոնիացիները խօսում են չորս տարբեր բարբառներով. ամէնից հարաւ գտնուում է Միլետը, այնուհետեւ դէպի հիւսիս՝ Միուս եւ Պրիենէ քաղաքները, որոնցից առաջինը Մէանդ-

րոս գետի ձախափնեակին էր՝ Միլետից մի փոքր հիւսիս, իսկ երկրորդը՝ նոյն գետի աջափնեակին՝ գետաբերանին մօտ<sup>40</sup>: Նշուած քաղաքները Կարիայում էին, եւ բնակիչները խօսում էին մէկ ընդհանուր լեզուով, այսինքն՝ բարբառով: Կարիան Հերոդոտոսի տուեալ հատուածում ունի աշխարհագրական նշանակութիւն<sup>41</sup>, որի սահմանը հիւսիսում Մէանդրոս գետն էր, հետեւաբար՝ Պրիենէն աշխարհագրորէն Լիւզիայի մէջ էր: Յոնիական մէկ այլ բարբառով խօսում էին Լիւզիայում գտնուող Եփեսոսի (ներկայիս Սելջուկի մօտ, Արցախի մայրաքաղաք Ապասսը<sup>42</sup> Կախտրոսի ձախափնեակին՝ գետաբերանի մօտ), Կոլոփոնի (Իզմիրից հարաւ<sup>43</sup>, հաւանաբար ներկայիս Դեղիրմենդերէն), Լեբեդոսի (ներկայիս Ուրքմեզը Կոլոփոնից հիւսիս-արեւմուտք<sup>44</sup>), Տէոսի (ներկայիս Սիդաշիկը<sup>45</sup>), Կլագոմենէի (ներկայիս Ուրլան Իզմիրի ծոցի հարաւային ափին, Սմիւռնէի եւ Էրիթրէայի միջեւ<sup>46</sup>), Փոկայայի (ներկայիս

40 T. Bryce, *The Routledge Handbook of the Peoples and Places of Ancient Western Asia*, p. 488, 564. Միուս քաղաքը Ստրաբոնի ժամանակ փոքրաթիւ բնակչութեան պատճառով միացել էր Միլետին (տե՛ս Տրաբոն, c. 595): *St'ua Dictionary of Greek and Roman Geography*, ed. by W. Smith, vol. II, Boston, 1857, p. 392:  
 41 Հմմտ. Տրաբոն, c. 293. Յոյն աշխարհագրագետը յիշատակում է նաեւ յոնիական տասներկու քաղաքները (տե՛ս Տրաբոն, c. 365, 592, 593):  
 42 Ա. Քոստան, *Մ. թ. ա. XII դարի մերձատրաքտեւեան ճգնաժամը եւ Հայկական լեռնաշխարհը*, Եր., 1999, էջ 43. T. Bryce, *The Routledge Handbook of the Peoples and Places of Ancient Western Asia*, p. 230. Ռ. Ղազարեան, *Մոյրսիի II-ի «տասնամեայ» տարեգրութիւնը*, Եր., 2013, էջ 66:  
 43 T. Bryce, *The Routledge Handbook of the Peoples and Places of Ancient Western Asia*, p. 171.  
 44 A. Greaves, *The Land of Ionia: Society and Economy in the Archaic Period*, Oxford, 2010, p. 100.  
 45 *Dictionary of Greek and Roman Geography*, ed. by W. Smith, vol. II, p. 1129.  
 46 *Dictionary of Greek and Roman Geography*, ed. by W. Smith, vol. I, Boston, 1854, p. 631-632.

35 Արիանոս, էջ 34:  
 36 Ксенофонт, *Греческая история*, с. 378.  
 37 D. M. Lewis, *Sparta and Persia*. Lectures delivered at the University of Cincinnati, autumn 1976 in memory of Donald W. Bradeen, Cincinnati Classical Studies, № 1, Leiden, 1977, p. 122; Э. В. Рунг, *Греция и Ахеменидская держава*, с. 277. Հմմտ. A. T. Olmstead, *History of the Persian Empire*, p. 44.  
 38 Р. Фрай, *Наследие Ирана*, Москва, 1972, с. 152.  
 39 Հերոդոտոս, I, 163. II, 106:

Յոնիան<sup>47</sup>) բնակիչները: Բացի վերջինից, մնացած քաղաքները եւս աշխարհագրական առումով մտել են Լիւզիայի մէջ: Ինչ վերաբերում է Փոկայային՝ Հերմոս գետի գետաբերանից հիւսիս, ապա այն կարող էր լինել ոչ թէ Լիւզիայի, այլ արդէն Էոլիսի մէջ, քանի որ նոյն Սմիւռնէն (ներկայիս Բայրակլին Իզմիրից մօտ 8 կմ հիւսիս-արեւմուտք<sup>48</sup>) նախքան յոնիացիների կողմից նուաճուելը Էոլիական քաղաք էր<sup>49</sup>: Պիւնիոս Աւագը Փոկայան համարում է Յոնիայի սահմանային քաղաքը հիւսիսում<sup>50</sup>: Սկիւլաքս Կարիանդացին ամբողջ Յոնիան տեղադրում է Լիւզիայում<sup>51</sup>՝ հաւանաբար նկատի ունենալով Լիւզիական տէրութեան ժամանակաշրջանը: Յոնիական երրորդ բարբառով խօսել են քիոսցիները եւ երիւթրեցիները<sup>52</sup>, իսկ սամոսցիներն ունեցել են իրենց ուրոյն բարբառը<sup>53</sup>: Ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ յոնիական տասներկու կամ, աւելի ճիշտ, տասներեք<sup>54</sup> քաղաքները վերաբնա-

կեցրել են քաղաքացիները, փիլոսոփաները, թեբէացիները, բէովտիացիները եւ այլն<sup>55</sup>: Յոնիան Աքեմենեան թագաւորների սեպագիր արձանագրութիւններում սովորաբար յիշատակուում է Սպարդա-Սարդէսի, այսինքն՝ Լիւզիայի հետ կողք կողքի<sup>56</sup>, ինչը համապատասխանում է աշխարհագրական հերթականութեանը: Սուխարհագրական հերթականութեան ժամանակ զայի պալատի շինարարութեան ժամանակ յոնիացիները եւ կարիացիները լիբանս-յոնիացիները եւ կարիացիները լիբանսեան մայրին Բաբելոնից բերում էին Սուխարհագրական հերթականութեան ժամանակ զարդարանք-զարդ, իսկ Յոնիայից բերուած զարդարանքներով զարդարում էին պալատի պատերը: Միաժամանակ յոնիացիները եւ լիւզիացիները պալատում աշխատում էին որպէս քարի փորագրիչներ<sup>57</sup>:

Այժմ անցնենք հին պարսկական սեպագիր արձանագրութիւններում բազմիցս յիշատակուող աշխարհագրական բառակապակցութիւնների քննութեանը, որը կարեւոր նշանակութիւն ունի պետութեան վարչական ընդհանուր կացութեան պարզաբանման համար: Ստորեւ ներկայացնում ենք աշխարհագրական այդ հասկացութիւններն ըստ տարբեր արձանագրութիւնների. DB...Egypt, (those) who are beside the sea, Sardis, Ionia, Media, Armenia, Cappadocia, Parthia... «... Mudrāya : tyaiy drayahyā : Sparda : Yauna : Māda : Armina : Katpatuka : Parθava :... »: DPe...Armenia, Cappadocia, Sardis, Ionians who are of the mainland and (those) who are by the sea, and countries which are across the sea; Saggartia... «...Armina : Katpatuka : Sparda : Yaumā : tyaiy : uskahyā : utā : tyaiy : drayahyā : utā : dahyāva : tyā : para : draya : Asagarta :... »: DNa...Armenia, Cappadocia, Sardis, Ionia, Scythians who are across

47 A. Greaves, *The Land of Ionia: Society and Economy in the Archaic Period*, p. 97.  
 48 A Commentary on Herodotus Books I-IV, ed. by O. Murray, A. Moreno, Oxford University Press, Inc., New York, 2007, p. 179; T. Bryce, *The Routledge Handbook of the Peoples and Places of Ancient Western Asia*, p. 658.  
 49 Հերոդոտոս, I, 149:  
 50 Pliny, *Natural History*, XXXI, 119, p. 310; Տրաբոն, c. 544; Plutarch's *Lives*, with an English translation by B. Perrin, vol. XI, Cambridge-Massachusetts-London, 1954, Loeb Classical Library, Artaxerxes, XXVI, 3, p. 190.  
 51 Скилак Карнандский, *Перипл обитаемого моря*, с. 261.  
 52 Էրիթրեան, Լեբեդոսը՝ որպէս յոնիական քաղաք եւ կղզի, յիշատակում է Հեկատէոս Միլեթացին (տե՛ս C. Müller, *Fragmenta historicorum graecorum*, vol. I, fr. 215, 219, p. 15):  
 53 Հերոդոտոս, I, 142:  
 54 Տասներեքերորդը Սմիւռնէն էր, որը յոնիական միութեանը միանում է աւելի ուշ (տե՛ս M. Лантева, *У истоков древнегреческой цивилизации*, с. 105-107):

55 M. Лантева, *ՈՂ. աշխ.*, էջ 96-99.  
 56 R. Kent, *Old Persian. Grammar. Texts. Lexicon*. 2nd ed., New Haven, 1953, p. 117, 137, 145 եւ այլն:  
 57 R. Kent, *ՈՂ. աշխ.*, էջ 143. R. Schmitt, *Die altperischen Inschriften der Achaimeniden*, Wiesbaden, 2009, SS. 131-133.

the sea, Skudra, petasos-wearing Ionians, Libyans... «...Armina : Katpatuka : Sparda : Yauna : Sakā : tyaiy : paradraya : Skudra : Yaunā : takabarā : Putāyā :... »: DSe-...Armenia, Cappadocia, Sardis, Ionians, (those) who are by the sea and (those) who are across the sea, Skudra, Libyans... «...Armina : Katpatuka : Sparda : Yaunā : tyaiy : drayahyā : utā : tyaiy : paradraya : Skudra : Putāyā :... »: DSm-...Sardis, Ionia, Media, Armenia, Cappadocia, Parthia...Sind, Skudra, petasos-wearing Ionians... «...Sparda : Yauna : Māda : Armina : Katpatuka : ParΘava...Hiduš : Skudra : Yaunā : takabarā :...»: XPh-...Sardis, Egypt, Ionians, those who dwell by the sea and those who dwell across the sea, men of Maka... «...Sparda : Mudrāya : Yaunā : tya : drayahiyā : dārayatiy : utā : tyaiy : paradraya : dārayatiy : Maciyā:...» A?P-...This is the Armenian. This is the Cappadocian. This is the Sardinian. This is the Ionian. This is the Scythian across the sea. This is the Skudrian. This is the Petasos-Wearing Ionian. This is the Libyan... «...20 iyam : Arminiya : 21 iyam : Katpatuka : 22 iyam : Spardiya : 23 iyam : Yaunā : 24 iyam : Sakā : paradraiya : 25 iyam : Skudra : 26 iyam : Yauna : takabarā : 27 iyam : Putāyā :...»<sup>58</sup>: Մէջբերուած տեղեկութիւններում կայ մի կարեւոր հանգամանք, ինչը եւ ուշադիր քննութեան պարագայում հնարաւորութիւն է տալիս յստակօրէն տեղադրել խնդրոյ առարկայ աշխարհագրական հասկացութիւնները: Հարցն այն է, որ այդ հասկացութիւնները յիշատակուած են որոշակի աշխարհագրական հերթականութեամբ, ընդ որում՝ հերթականութիւնը գրեթէ անխախտ է մնում, ինչը սովորաբար պարսկական սեպագիր արձանագրութիւններում խստօրէն չի պահպանուած: Այսպէս, Բեհիսթունի արձանագրութեան

մէջ «(those) who are beside the sea»<sup>59</sup> աշխարհագրորէն նոյնանում են Կիլիկիայի եւ Կիպրոսին: Կարծում ենք, որ DPe «(those) who are by the sea» նոյնպէս տեղորոշում է Կիլիկիայի եւ թերեւս Կիպրոսի տարածքներում, ընդ որում՝ նման եղբակացութեան մեզ մղում է այն հանգամանքը, որ երկու արձանագրութիւններում Կարիայի բացակայութիւնը<sup>60</sup> թոյլ է տալիս Կարիան եւ նրանից արեւելք ընկած Լիւկիան ու Պամփիլիան եւս ընդգրկել աշխարհագրական այդ ընկալման մէջ: Բնականաբար, Կիլիկիայի եւ Կիպրոսի ներգրաւումը Կարիայի, Լիւկիայի, Պամփիլիայի հետ աշխարհագրական նման սահմանների մէջ ցոյց է տալիս, որ այս յիշատակութիւնը նախորդել է Դարեհի վարչական վերափոխումներին, քանի որ I սատրապութեան մի մասի եւ IV-ի ներառումն աշխարհագրական միեւնոյն սահմանման մէջ չի համապատասխանում Դարեհի վարչական համակարգի մասին պահանջուած տեղեկութիւններին: Ինչ վերաբերում է DPe յոնիացիներին, ապա սրանք յստակօրէն համապատասխանում են Փոքր Ասիայի եւ Էգէյեան ծովի պարսկահայա-

59 Գ. Նալբանդեանը թարգմանել է «այն երկրները, որ ծովում են» (տե՛ս Դարեհի Վշտասայի Բիսեթու-նեան արձանագրութիւնը, թարգմ. բնագրից, առաջաբան եւ ծանօթ. Գ. Նալբանդեանի, Եր., 1964, էջ 8): Կարելի է ենթադրել, որ խօսքը կղզիների մասին է (յունական կամ, թերեւս, Կիպրոսը): Բայց Բեհիսթունի արձանագրութիւնում յունական կղզիների մասին դեռեւս չէր կարող խօսք լինել, իսկ Կիպրոսը հնագույն թէ առանձին յիշատակուէր, մանաւանդ որ խօսքը գնում է երկրների մասին: Եւ ընդհանրապէս, Բեհիսթունի արձանագրութեան այլ թարգմանութիւններում եւս կարողում ենք «այն երկրները, որ ծովի մօտ են» (տե՛ս, օրինակ, *Хреотоматия по историче-ским Древнего Востока*, под редакцией В. В. Струве и Д. Г. Редера, Москва, 1963, с. 358; М. А. Дандамаев, *Иран при первых Ахеменидах (VI в. до н. э.)*, Москва, 1963, с. 262): Ա. Օլմսթեդը tyaiy drayahyā-ն նույնացնում է Հելլեսպոնտ-սեան Փոնիգիային (տե՛ս А. Т. Olmstead, *History of the Persian Empire*, p. 44):

60 DNa-ում կարիացիներն արդէն յիշատակում են:

58 Նոյն տեղում, էջ 119, 136, 138, 142, 145, 151, 156:

տակ յոյներին<sup>61</sup>, իսկ «անդրծովեան երկրները» տեղադրում են Թրակիայում, Մակեդոնիայում եւ Դանուբի գետաբերանի շրջանում: Միւս արձանագրութիւններում արդէն կան տեղադրական որոշակի սահմանազատումներ: Այսպէս, DNa-ում առանձին յիշատակուած յոնիացիներին յաջորդում են անդրծովեան սկիւթները, իսկ վերջիններին յաջորդում են Սկուզրա երկիրը<sup>62</sup> եւ սաղաւարտակիր կամ վահանակիր յոյները (petasos-wearing Ionians)<sup>63</sup>: Տուեալ յիշատակութիւնը գնում է ըստ աշխարհագրական հերթականութեան՝ արեւելքից արեւմուտք: Այս արձանագրութեան մէջ բերուած հատուածի վերաբերեալ աշխարհագրական մեր նոյնացումները հետեւեալն են: Յոնիացիները համա-

պատասխանում են մայրցամաքի եւ կղզիների յոյներին, «անդրծովեան սկիւթները» տեղադրում են յոնիացիների եւ Սկուզրայի միջեւ՝ Դանուբի գետաբերանի շրջանում, իսկ Սկուզրան տարածում էր Թրակիայի եւ Մակեդոնիայի տարածքներում: Սաղաւարտակիր կամ վահանակիր յոյները տեղադրում են Էգէյեան ծովի հիւսիսային ափերին<sup>64</sup>: Այստեղ անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել հետեւեալ հանգամանքի վրայ: Կարծում ենք, որ վարչական առումով ե՛ւ «անդրծովեան սկիւթները», ե՛ւ սաղաւարտակիր կամ վահանակիր յոյները մտել են Սկուզրա սատրապութեան ներքին եւ Սկուզրա սատրապութեան մէջ, ընդ որում՝ պարսկական սեպագիր արձանագրութիւններում մի քանի երկրարձանագրութիւններում մի կողմ կողքի, ներկարող էին յիշատակուել կողք կողքի, այն դէպքում, երբ վարչականօրէն կազմում էին մէկ ամբողջութիւն. օրինակ՝ պարթեւները, քորասմները, արէյները, սոգդները յիշատակուած են արձանագրութիւններում եւ միաժամանակ հանդէս են գալիս XVI սատրապութեան կազմում: Հերոդոտոսը, նկարագրելով Աքեմենեան տէրրոտոսը, նկարագրելով Աքեմենեան տէրրութեան վարչական բաժանումը, վերջում աւելացնում է, որ որոշ ժամանակ յետոյ հարկատու են դառնում նաեւ կղզիներում եւ Եւրոպայում մինչեւ Թիսպիան ապրողները<sup>65</sup>, այսինքն՝ Թրակիան, Մակեդոնիան, «անդրծովեան սկիւթները», սաղաւարտակիր կամ վահանակիր յոյները եւ Էւրոպայում մինչեւ Թիսպիան ապրողները: Մա նշանակում է, որ մինչեւ նշուած շրջանների նուաճումը սատրապութիւնները յուսակալ արդէն գոյութիւն ունէր, այլ յոնիացիները չէին հասնում իրենց տարածքները, եւ վարչական վերափոխումն էլ արդէն կատա-

61 O. Szemerényi-ի մօտ (տե՛ս O. Szemerényi, *Four Iranian ethnic names: Scythian-Skudra-Sogdian-Saka*, Wien, 1980, p. 11) հեղափոխութիւն է թարգմանուած է «the Ionians of the land (i. e. Asia Minor) and the sea (i. e. the islanders)», սակայն, մեր կարծիքով, կղզիաբնակ յոյները այն հասնումն ուղղակիօրէն արտացոլում են եւ հասնում են գալիս առաջին բառակապակցութեան մէջ:

62 Անունը ծագում է մակեդոնական Scydra քաղաքի անունից (Pliny, *Natural History*, Plin. IV, 34, p. 142; Claudii Ptolemaei *Geographia*, ed. C. F. A. Noebsse, t. I, Lipsiae, 1843, III, 12, 39, p. 199):

63 Այս յոյները նոյն արձանագրութիւններում յիշատակուած են նաեւ «Ionian with shield on head» եւ «this is the shield-bearing Ionian» (տե՛ս *Persepolis, Takht-I-Jamshid* (by Ali-Sami), 5th ed., Shiraz, 1967, p. 41, 83): Պերսեպոլիսի ապագայի սանդուղիի բարձրաքանակներից մէկում պատկերուած են Թրակիայի եւ Արեւելեան Մակեդոնիայի բնակիչները, որոնք արքային բերում են վահաններ, մի-գակներ եւ ձի (տե՛ս նոյն տեղում, էջ 33), այսինքն՝ Վահանների պատկերումը թոյլ է տալիս մտածել, որ վահանակիր յոյների՝ որպէս Սկուզրա սատրապութեան ժողովուրդներից մէկի տեղորոշումը Էգէյեան ծովի հիւսիսային ափամերձ շրջանում լիովին արդարացում է: DNa-ի Yaunā takabarā-ն (ըստ Ռ. Վեների =DB եւ DPe tyaiy drayahyā, որը մեր կարծիքով, միշտ չէ) արքային տարբերակում ունի «the second Ionians, who wear shields on their heads» թարգմանութիւնը (տե՛ս R. G. Kent, *The Lists of Provinces*, - *Journal of Near Eastern Studies*, vol. II, 1943, p. 305, n. 15):

64 М. А. Дандамаев, *Политическая история Ахеменидской державы*, с. 111. Է. Հերցֆելդն իր աշխատութիւններից մէկում վահանակիր յոյներին տեղադրել է Մակեդոնիայում (տե՛ս E. E. Herzfeld, *Archaeological History of Iran*, London, 1935, էջ 112-ին լազորորդ քարտէզը):

65 Հերոդոտոս, III, 96:

րուած իրողութիւն էր: Յամենայն դէպս, ոչինչ չի խանգարում, եթէ Սկուզրա սատրապութիւնը համարենք XXI վարչական միաւորը: Աշխարհագրական այս նոյնացումները DSe-ում անուանական առումով որոշակի փոփոխութիւններ են կրում: Յոնիացիները, ինչպէս եւ Սկուզրան, մնում են իրենց տեղերում, իսկ, դատելով վահանակիր յոյների բացակայութիւնից, սրանց համապատասխանում են «(those) who are by the sea», իսկ «(those) who are across the sea» նոյնանում են DNA «անդրծովեան սկիւթներին»: DSm-ում աշխարհագրական հերթականութիւնը գրեթէ պահպանուած է: Յոնիան յիշատակում է Սարգէսի ու Մեդիայի միջեւ, իսկ Սկուզրան եւ «petasos-wearing Ionians»՝ Հնդկաստանից յետոյ: XPh-ում աշխարհագրական հերթականութիւնը նոյնպէս խստորէն պահպանուած է: Յոնիացիները հանդէս են գալիս Եգիպտոսից յետոյ, որից առաջ նշուած է Սարգէսը: Յոնիացիներից յետոյ յիշատակուող «those who dwell by the sea» նոյնանում են DSe «(those) who are by the sea», այսինքն՝ սաղաւարտակիր կամ վահանա-

կիր յոյներին, իսկ «those who dwell across the sea» «անդրծովեան սկիւթներն» են: Սկուզրան էլ յայտնուել է աշխարհագրական բոլորովին այլ միջավայրում՝ տիրա-խառն դայ սակերի եւ *Ākaufaciya*-ի միջեւ: Ինչպէս երեւում է, Աքեմենեան տիրակալների համար թուարկուող երկրների աշխարհագրական հերթականութիւնն իրենց արձանագրութիւններում խստորէն պահպանելը ոչ միշտ է առանձնապէս կարեւորութիւն ներկայացրել: Իսկ, օրինակ, A?P-ում ե՛ւ աշխարհագրական հերթականութիւնը, ե՛ւ անունների յիշատակութիւնը լիովին համապատասխանում են DNA-ին:

Այսպիսով, ելնելով կատարուած քննութիւնից՝ կարող ենք եզրակացնել, որ չնայած Աքեմենեանների վարչական վերածեւումներին՝ յոնիական հարուստ քաղաքները Աքեմենեան Պարսկաստանի I սատրապութեան համակարգում եւ ընդհանրապէս Փոքր Ասիայում աւելի քան երկու հարիւր տարի պահպանեցին իրենց ռազմաքաղաքական ու տնտեսական կարեւորագոյն նշանակութիւնը:

«ՈՂՋՈՅՆ ՔԵԶ, ՄԱՐԻԱՄ»  
ՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ ՈՂՋՈՒՆԱՏՐՈՒԹԵԱՆ  
ՁԵՌԱԳՐԱՅԻՆ ՈՒ ՀՆԱՏՊԱՅԻՆ ԲՆԱԳԻՐՆԵՐԸ

Հ. Մեսրոպ Վրդ. Թովալեան

Նկատելով, որ «Ողջոյն Քեզ, Մարիամ» Հրեշտակային Ողջունատրութեան պատմագրութիւնը պիտի շարադրեմ «ՄԱՐԻԱՄ Մարեմագիտական ուսումնաթերթին» մէջ հրատարակած «Վարդարանին պատմութիւնը Հայ Եկեղեցիին մէջ» իմ երկասիրութեանս ընթացքին, հոս կը գոհանամ միայն նմոյշներ ներկայացնելով անոր ձեռագրային եւ հնատպային բնագիրներէն, զորոնք 1982-ի ամառը ուսումնասիրեցի մեր Վիեննայի Միթիթարեան Մայրավանքին ձեռագրատան եւ մատենադարանին մէջ:

Ընդհանրապէս, սուրբ վարդարանին միջազգային պատմութեան եւ մասնաւորապէս՝ Հրեշտակային Ողջունատրութեան սկզբնաւորութեան հաւանական թուականները նկատի առնելով՝ քննարկեցի մեր ձեռագրատան ճոխ հաւաքածոյէն վաթսուէ աւելի միայն այն բնագիրները 1223/1261-1883 դարաշրջաններէն ու տարբեր վայրերէն հասած քրիստոնէականներ, մտածականներ, աղօթագիրքեր, հոգեւոր մատենաներ, մաշտոցներ, գանձարաններ, ժողովածոներ, ճառոցներ, ճառընտիրներ, տօնականներ ու տաղարաններ, որոնք կրնային ատաղձ հայթայթել գիտաշխատողին՝ անոր խնդրառարկայ երկասիրութեան համար<sup>1</sup>:

Մեսրոպաստեղծ այբուբենին 1486-ին եղած առաջին տպագրութեան<sup>2</sup> ժամանակ,

մէկ կողմէ, վարդարանը սկսած էր նոր ծանօթ ըլլալ եւրոպացեակ հայերուն, եւ, միւս կողմէ, «Ողջոյն Քեզ, Մարիամ» աղօթքը իր սաղմնային վիճակին մէջ էր թէ՛ իբր բնագիր ու թէ՛ իբր տարածուած-ճանաչում:

Վենետիկ, 1512-ին<sup>3</sup> տպուեցաւ առաջին հայատառ մատենանը՝ հանդիսանալով ըրոց մեծագոյն հաւաքածոն կը գտնուի վիեննական Հայրերուն մատենադարանին մէջ: Հոս էր, որ վերոյիշեալ տարիին ամառնային երեք ամիսներու ընթացքին մանրակրկիտ քննութեանէն անցուցի մեր հնամատենաներէն միայն այն բաղմաթիւ հատորները, որոնք, իմ ենթադրութեամբս, կրնային ընձեռել իմ ժամապահանջ ու ջղասպառ աշխատանքին:

1982-ին սկսած լայնածիր աշխատանքս ընդհատեցաւ զանազան պատճառ-

տպագիր այբուբենը 500 տարեկան է. «Հայրենիքի ձայն», Երևան, 22 Յունուար, 1986:  
3 Հայերէն առաջին ճանաչողի՝ Սուրբ Որբաթապիոք-ին տպագրիչ Յակոբ Մեղապարտին մատենան, հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Գ., Պէյրութ, 1972, էջ 510, թիւ 261. Ռ. Իշխանեան, Յակոբ Մեղապարտ. V-XVIII դարեր, Երևան, 1976, էջ 458-468. Ռ. Իշխանեան, «Յակոբ Մեղապարտ», շտ. 6, Երևան, 1980, էջ 684-690. Եւ իմ համապարփակ ուսումնասիրութիւնս, 12 Հոկտեմբեր 2013-ին լոյսընծայած, իբրեւ պատմա-քննական ու համադրական ակնարկ՝ Մեսրոպ Հայրենի, «Սուրբ Որբաթապիոք» հայատառ տպագրութեան երակայինը՝ հինգ հարիւր տարեկան (1512-2012), Այնճար, 2013, էջ 167-190: Հմմտ. Նի-նել Ոսկանեան, Քնարիկ Կորկոտեան, Անթա-նաս Սարգեան, Հայ գիրքը 1512-1800 թուականներին, Երևան, 1988, էջ 2ա-3ա:

1 Անկասկած, որ այլ հայ ու օտար ձեռագրատուն-րուն մէջ կան գրչագիրներ, որոնք կը բովանդակեն տուեալներ Ակատմամբ վարդարանին ու Հրեշտակային Ողջունատրութեան:  
2 Տե՛ս Bernhard von Breidenbach, Reise ins Heilige Land, Mainz, 1486, եւ Գ. Արգարեան, Հայոց